Արձանագրություն թիվ 1

2018 թվականի սեպտեմբերի 11-ին տեղի ունեցավ << Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 2^{ա} դասարանի ծնողական ժողովը:Ժողովին ներկա էին բոլոր ծնողները. դասվար Տաթևիկ Բագրատյանը և տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրենակարգում՝

1.Ծնողխորհրդի ընտրության հարցը:

2.Տաք սննդին առնչվող հարցի քննարկում:

3.Ընթացիկ հարցեր/կարգապահություն,ռեժիմ/՝

1.Լսեցին.- Ծնողխորհրդի ընտրության հարցը

Ելույթ ունեցավ դասվար Տ. Բագրատյանը՝ տեղեկացնելով,որ ուստարվա սկզբին պետք է ձևավորել ծնողխորհուրդ,որի գործառույթներից է սովորողների արտադպրոցական աշխատանքներում ներգրավելը,նրանց հանգիստն ու ժամանցը կազմակերպելը:Անհրաժեշտ է ծնողխորհրդի կազմում ընդգրկել ակտիվ ծնողներին; Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 2^{ա} դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով՝ Առաջարկվեց Արմինե Գուլամերյանի, Անի Պապիկյանի, Հայկուհի Հայրապետյանի, Գայանե Գալստյանի և Ռուզաննա Աբրահամյանի թեկնածությունը,որից հետո ընտրեցին ծնողխորհրդի նախագահ:

Որոշեցին.-Առաջարկել տնօրենությանը՝հաստատելու ծնողխորհրդի հետևյալ կազմը.

Նախագահ՝ Գուլամերյան Արմինե

Անդամներ՝ Պապիկյան Անի

Հայրապետյան Հայկուհի

Գալստյան Գայանե

Աբրահամյան Ռուզաննա

2.Լսեցին.-<<Տաք սնունդ ծրագրին առնչվող հարցը>>:
Ծնողներին ներկայացվեց այն մթերքների ցանկը, որը ծրագրի շրջանակներում տրամադրվում է դպրոցին:Նշվեց,որ կարևոր պարագաներ,ինչպիսիք են աղը, մաքրման միջոցները, դպրոցը պետք է ձեռք բերի՝ Ուստի՝ անհրաժեշտ է նաև

ծնողների աջակցությունը:Ծնողներին տեղեկացվեց, որ ծրագրում գոյություն ունի <<Ծնողական ներդրում>> հասկացությունը,որի ժամանակ նախատեսված գումարի չափը կազմում է 100-ից 300դրամ:

Որոշեցին.- Յուրաքանչյուր ամիս հավաքել 300 դրամ՝ անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու համար:

3.Օրակարգային հիմնահարցերը քննարկելուց հետո անդրադարձ կատարվեց ընթացիկ հարցերին:
Դասվար Տ.Բագրատյանը նշեց,որ նոր ուսումնական տարում դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով: Դասվարը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ,հետևել,որ աշակերտները դպրոց հաճախեն ժամանակին, պայուսակով,դասագրքերով,գրենական պիտույքներով ու աշակերտին վայել հագուկապով: Քննարկվեցին դասարանին անհրաժեշտ տետրերի հարցերը

Որոշեցին.-Ուշադիր և հետևողական լինել սովորողների նկատմամբ. անհրաժեշտության դեպքում աջակցել դասվարին անհրաժեշտ ուսումնական պարագաներ/տետրեր/ ձեռք բերելու հարցում:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Ա.Գուլամերյան/

Քարտուղար՝ /Ա.Պապիկյան/